



«02» 10 2013

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

№ 1/06.1/8988-13

ՀՐԱՄԱՆ N 885Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԸՍՏ
ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ, ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 11-Ի N105-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի
Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենքի 72-րդ հոդվածով և ՀՀ արտակարգ
իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) կանոնադրության 13-րդ կետի 4-րդ
և 10-րդ ենթակետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել ՀՀ ԱԻՆ համակարգի ստորաբաժանումների և
կազմակերպությունների համակարգման իրավասությունները (աշխատանքների
բաշխում) ըստ գործունեության ոլորտների՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի 1-ին կետով սահմանված հավելվածով վերապահված
իրավասությունների (աշխատանքների) կատարումն ապահովելու նպատակով
պաշտոնատար անձինք՝

1) կազմում են տարեկան միջոցառումների (անհատական աշխատանքային)
պլաններ և մինչև նախորդող տարվա դեկտեմբերի 20-ը ներկայացնում են իմ
հաստատմանը,


2) հանձնարարականներ են տալիս իրենց համակարգման ոլորտում գտնվող ստորաբաժանումների ղեկավարներին,

3) յուրաքանչյուր եռամսյակի ավարտին հաջորդող ամսվա 10-ը ներկայացնում են հաշվետվություն՝ սույն հրամանի 1-ին կետով սահմանված իրավասությունների (աշխատանքների) և սույն հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված պլաններում ընդգրկված միջոցառումների կատարման վերաբերյալ:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2010 թվականի մարտի 11-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ստորաբաժանումների, ըստ գործունեության ոլորտների, համակարգման իրավասությունները սահմանելու մասին» N105-Ա հրամանը:

4. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

5. Հրամանը հայտարարել ըստ առնչության:



Ա. ԵՐԻՅՅԱՆ

Sign